



Հ Ա Ր Ի Ի Ր Ե Մ Ե Ա Կ

Ե Ր Զ Ա Ն Ի Կ Փ Ո Խ Մ Ա Ն Ա Ռ Տ Ե Ր

Ծ Լ Ռ Ե Յ Ի Ն Ը Ս Տ Ո Ի Ծ Ո Յ Մ Ե Ծ Ի Ն Մ Խ Ի Թ Ա Ր Ը Յ

Ե Ի

Ն Ը Ի Ը Կ Ը Տ Ի Ք

Կ Ո Չ Մ Ա Ն Լ Ո Ւ Ս Ա Ն Ո Ր Ո Պ Ա Ն Ո Ի Ա Ն

ԼՆՅԵԱԼ ամսոյն վերջի կիւրակէն մեծանշան ծագեց մեզի, և մեծ յիշատակ թողուց մեր Հայաստան աշխարհին . կը հաւատանք՝ որ սիրաձայն հոգւոց հաւաքանաց ճամբան՝ վայրկեանի մէջ կտրելով Հայոց հրեշտակը, մեր սիրելի հայրենեաց պանդուխտ որդւոցս ուխտը աս Լճրիական ծովածուփ և բաղդածուփ ծոցէն՝ հասուց անոր իմանալի ակընջին . ԼՆՍ տարուանս ապրիլի 27 օրը լրացուց հարիւր տարուան շրջան մը մեր Վախահօրը երջանիկ մահուան ՍԵՆՆԻ ՍԽԻԹԱՐԱՅ ԼՔԱԿՅԻ . այս յիշատակը շատ մեծ էր ՍԽԻԹԱՐԱՅ հայրասէր որդւոցը սրտին մէջ, որ իր պատուական նշխարացը պահարանին քով՝ Հայաստանին մէկ մասը և անոր ամենէն ցանկալի գանձերէն մէկը միշտ գտնելով կը մխիթարուին . բայց այս տարուանս մեծ յիշատակը կ'ուզէին զգալի նշանով մ'ալ հաղորդել իրենց ազգայնոց, որոնք այն մեծ ԼՆՃին երախտիքը կը վայլեն քիչ շատ, և պարտք ունին ճանչնալու զինքը Հայաստանի ամենամեծ անձանց և բարերարաց մէկը, որուն նմանը չերևցաւ իրմէ վերջ, իրմէ առաջ ալ վեր երթալով ինչուան Լ ամբողջացուցն օրը՝ հաւասարը չենք գտներ : Բայց բաղդը որ հիմայ աշխարհիս մեծ մասը շարժելու ատեն՝ մասնաւոր կերպով մը՝ պարզ աչքով և կռնձմտած ընթուիններով կը դիտէ զՍ ԵՆԵՍԻԿ, ուր որ ՍԽԻԹԱՐԱՅ մահացու մասունքը կը հանգչին և անմահութեան պատուանդանն է, մեզի ալ չներեց ուրիշ կերպով այս յիշատակիս պտուղը ընծայել մեր ազգակցաց . սակայն չկրցաւ զմեզ խափանել որ բոլոր միաբանութիւնը, և Սափայէլեան Վարժարանին աշկերտները՝ իբրև նուիրակք ազգին կողմանէ՝ մէկ տեղ գալով, նախ առ ԼՍտուած հանդիսաւոր

գոհութիւն մատուցանենք , վերջը ըստ սովորութեան մերոյ ատենական ներբողիւ
ալ պատուենք Սեծին յիշատակը՝ իր մեզի կանգնած գեղեցիկ գրատանը մէջ և
մեր իրեն կանգնած կճեայ արձանին առջև : Շատ երջանիկ էր մեզի այն
ժամը՝ որ միայն այնպիսւոյն յիշատակաւը անցաւ , երբեմն զմեզ հարիւր տարի
առաջ անցընելով և ցուցընելով զՍԽԻԹԱՐ իր յետին երկրաւոր վայրկեաններուն
մէջ , երբեմն անկէ հարիւր տարի առաջ բերելով և ցուցընելով անոր արդիւնքը
և արդեանցը արդիւնքը , և ապագայն ալ յուսացընելով . այս քաղցը յիշատակները
չկրցան խռովել Նոյն միջոցին մէջ մեզմէ չորս մղոն հեռու բարեկամ երկրէ մը , և
չորս մղոն ալ հեռու թշնամացած երկրէ մը՝ իրարու հանդիպած որոտաձայն
թնդանօթներու ընդհատ այլ անդադար բոմբիւնքը , որոնց մահահոտ բերնին
ահեղ բարեւերը մենք ալ կը լսէինք . բայց մեր հօրը մեզի կանգնած անդորրու
թեան ապակէնր այնչափ ամուր էր՝ որ անոնց խռովութեան սպառնալիքը չէր
վրդովէր . ՍԽԻԹԱՐԱՅ Ծագած խաղաղական լոյսը աւելի զօրաւոր էր , քան այն
սև պղինձներուն սոսկալի մթաբեր լոյսը . և անոնց որոտմունքէն աւելի զօրաւոր
էր անձայն սրտերէ առ լստուած ելած մաղթանքը հայաստանի երջանկութեանը
համար :

Վերբողէն ետև մեր արհիպպատիւ հոգևոր հայրը և ՍԽԻԹԱՐԱՅ արժանա-
ժառանգ (Յաջորդը՝ իր Վախնոյն հոգելից եռանդեամբը լցուած՝ խրախոյս տուաւ
իրեն որդւոցը՝ մեր նախահօրը ճամբուն աւելի քան զաւելի հետևելու . և անոր
անհամեմատ ազգային արդիւնքն ալ նորէն նկարելով՝ ցրցուց որ շատ իրաւունք
ունի երկրորդ Սուսաւորիչ մը ըսուելու , առաջին Սուսաւորչայ և (Սարգմանչաց
արդիւնքը կենդանացընելով , անոր համար արժանի է որ հանդիսապէս նուիրենք
մեր հօրը ՍԽԻԹԱՐԱՅ Սուսանորոգ պատուանունը :

Ար յուսանք որ բարեսէր ազգերնուս ալ՝ որ ՍԽԻԹԱՐԱՅ արդիւնքը կը ճանչնայ
և կը սիրէ՝ եւելի բան մը չէրենայ աս իր որդւոցը սիրալիր իղձը , որով պարտք կը
համարին պատուելու իրենց հայրը , և անարժան չսեպէ կանչելու մեր հետը

ԿԵՑՑԷ ԼՍԻՍԱՆՈՐՈԳՆ ՍԽԻԹԱՐ :

ՅՕԳՈՍՏԱՓԱՌԻՆ Լլիւսեայ 'ի կուսագեղըս հանդրին
Լլրարատեան հին նըշան կամարակապն եօթնարփին՝
Լլրաժշտաց հոգերգու ճօճք լարեցաւ պարառիկ .
Լլրիք 'ի ճեմն հարաւոյ հիւսիսասուն Խսկուրհիք ,
Օվարդսմատին ոլորեալ փողփողէնէջըն հիւսեակ
Լլբերելով արգադիր Սեծին գլխոյ մեծ պըսակ ,
Լլյնմ որ զանկեալըն ճակատ վերակառոյց ըզհայոց ,
Լլյնմ որ զյետինըն խաւար կաստեաց յետին սերընդոց :

Ըստուածային հրաշից հոգի՝ որ յանկից հինու բարիս ,
 Որ սիրարկու թեւօքն 'ի թոհ և 'ի դանդիւրն սահարկեալ
 Յանկերպարան տարերաց արտակիտէ սարեալ աշխարհս ,
 Եւ 'ի խօլ խաւարէ ջահս ակնակապիճ՝ կոյր այերաց ,
 Խաւարամիտ ազանց հնարի լուսաւորիչըս բարեխնամ :
 'Երն և նախնոյն աշխարհաց հսկայասերմըն հայկազանց
 Լուսատուս յարուցանէր 'ի յանկարծուց ուստեք կողմանց .
 Սերթ ըզնորին ըզձեռասունս յըղէր Փրկչին սուրբ փայլածուս ,
 Սերթ հայ փառացն 'ի խաւարչէն՝ զլուսաւորիչն բողբոջէր ,
 Եւ յանդընդոց դարձեալ ըզնոյն հոգիածու մեզ առադրէր .
 Եւ 'ի նորուն մերթ 'ի զարմէ , մերթ 'ի բարձից , մերթ յաթոռոց :
 Խօկ մինչ վըզեալ թանձրապարոյր վիշապուռոյցըն խեղ խաւար
 Հնգադարեանն մանուածով 'ի հայաստանս յոխորտակեալ
 Շըչեալ վազէր ընկուզանէր ըզլոյն յանգուժ դժոխորովայն ,
 Ընդ , և Վրիգորին և Սահակեանց խամբէր վաստակ ,
 Եւ անբարին աճէր ծընունդ և ժամանակըն վայրապար ,
 Բացաթեւեալ հոգւոյն՝ որ յալս յաւիտենից ըզբաղդս յուզէ
 Ի Փոքուէ հայոց մարզէ 'ի վաղընջուց գաղթականաց
 Կանգնէր յօճան հայաստանեայց ըզ]՝ ԱՆԻԹԱՐ ԼՈՒՍԱՆՈՐՈԳ :

Որոյ առեալ յաստուածուստ ըզկնիք ազգին վերածնութեան՝
 Ի լուսակիզն աստեղատանց ուրանօր վեհք ճակատագրին ,
 Ըստուածութեան ծածուկ հայոցք ուր աշխարհաց տուրք հայթհայթին ,
 Վայր խոյանօք աստուածամուխ սա ոչ հրեշտակ ոչ զըրուանեան ,
 Օվայրընկեցիկ միտս հայութեան՝ յերկնախորանըս թուրցանել :
 Սրտեալ 'ի տոկ և յապաժոյժ ու 'ի դառն երկունս կենօքըն չափ ,
 Տառապէր արիապէս՝ յաղթանակին ակն անբըթիթ .
 Ոչ արքենին սրմա մսկան կայր լըծակից իբր առ հինս անդ ,
 Ոչ 'ի ճոկան սա խաչանիչ գայր պերճացեալ պէս՝ Վերսիսեանց ,
 Եւ ոչ խրախոյս աստ հայակոյտըն փարագուն և հրաւիրակ .
 'Եւ և լըբեալ՝ անձին ազգէր , յաստուածայինն հարեալ 'ի սէր ,
 Եւ ազգայնով սուրբ նախանձու գերազանցիկ քան զառաջինս
 Ուս խաչաբարձ տայր միայնակ՝ կանգնէր ըզմեծըն հայկարան :
 Շունչ հոգեղէն զոր ինքն հարուստ ծրծեաց յերկնէ՝ փըչէր 'ի դէմս ,
 Վնացուցանէր յերեթ սրտին վըտակ կենաց ճշմարտութեան ,
 Եւ ըզկորզեալն 'ի հայրական հնութենէ հոյզ դիւանական
 Տըզիտակալ շըփեալ աչացն՝ իմաստնատեսըս յարդարէր ,
 Շաւիղ հորդեալ լուսոյ կենաց անդր 'ի Սասիք , անդր 'ի յերկինք :
 Ինքն 'ի հեռուստ ըզյիմնամեայ երկանցն արդիւնս նրկատելով

Օղւարձանայր յալեացրն փաղփ, ծափէր 'ի հմայս հայախրախոյս,
Եւ ըզհանդրեան հեզ հառաչանս 'ի յարձագանգս հնչէր բնկին,
Ըպ' աւետօք սլանայր մեծիս գործաւնութեան՝ վեհիցն յերաստ,
Ըբ Ղրիգոր ձայն ածելով, առ 'Երսիսեանս և Սահակեանս .
“ Հայրապետք Հայոց, արիք 'ի սրբութեան սրկապանից,
Ըրիք տրտմեալքըղ յարազուարձք, նորոգեցան ձեր հին արարք .
Եկայք տեսէք ըզհայաստանն խաթարեալ, զիսրդ կանգնի .
Ուրախ լերուք երկինք, ուրախ լերուք Հայոց սուրբ հայրապետք,
Օի հաճեցաւ Տէր նոր ծագել ինեւ զայս լոյս Հայոց մեծաց .”
Ուրախ լեր և դու Հայր, ուրախ լեր մեծ ԼՈՒՍԱՆՈՐՈԳ,
Որ բազկաւդ հրզոր վաներ զնախնոյ լուսոյն մէզ խաւարիչ .
Ըհա ջահաւորեալն 'ի քէն արփի՝ ծագէ անմուտ
Ըքեզակուննրս ցընցըղկեալ, լուսնակս ընձուեալ 'ի կայս և կոյս .
Բեւ սարտուցեալն յառթէ մեղաց Հայաստանեայց դաւնայ ճաճանչ,
Ըզհնգերեակ դարուց մրուայլ՝ ճաճանչասուր խեթկեալ ծայրիւք .
Ձիգ ձմերանց տարտամ տարափք քեւ փարատին յԸրարադայ,
Հողմոյդ հասեալ հոգեշունչ՝ ցըրուին փաղանգք օդակուտակք .
Ձայն գարնայնի ըախաւետեալ հուշակի, ո՛հ, ողջոյնք Հայոց .
Սիւգ սիրային փարեալ 'ի դէմքս մեռունակ՝ զարթոյց զոգիս .
Ըհա զարթեան ըստուերանիստք՝ առ լոյս կենաց հառաչեցին .
Ըազուկք տատանեցան, շղթայք անկան տրգիտակապք,
Ղանդաչաքայլ ոտն հետազօտ մահուն շաւղաց՝ ուղղի յեթեր .
Թեւք ընդերկրաքարք 'ի հոլաթեւս կրթին զուարթնոց .
Ընին Հայկայ խորուստ վըհին գնայ 'նդոստուցեալ յԸզատն 'ի վեր .
Ըոր արդարեւ տըւար Հայոց դու ՍԵՒԹԱՐ ԼՈՒՍԱՆՈՐՈԳ .
Ղու որ ընդ խիտ մրցեալ միգի՝ լուսով լուծեր զերկն անհընար .
Ըրդ 'ի բնիկն 'ի լուսաձեմ վերապարեալ յառագաստի
Ըռատացո՞ ընդ հայրապետս Հայոց զհոսանս լուսոյ շնորհաց
Յընդհանուրս սփռել Ըզին սիրեցելոյ յանմահդ հոգւոց .
Եւ դու լուսաւորեանց լուսաւորեանց Հայոց աշխարհ,
Շող 'ի բարձանց ՍԵՒԹԱՐԱՒ մատրուուակեալ կաթէ 'ի քեզ .
Ըրդ մերկեա՞ զքօղս այրութեան, արկ կուսական ըզքեւ հանդերձ,
Ե՛լ բազմեանց ծիրանազգեստ 'ի դիւցընկէցք քո՞ 'ի Սասիս .
Ըեր դարձեալ մայր վեհազանց, յարո՞ մանկունս լուսապայծառս,
Եւ միաձայն դաւանեանց քեզ ըզՍԵՒԹԱՐ ԼՈՒՍԱՆՈՐՈԳ :

